ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 1645-Ա/2 **18.11.2020թ.**

2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ ենթակետի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել 2020-2021 ուսումնական տարվա 2020 թվականի դեկտեմբերին անցկացվող պետական ավարտական քննությունների կազմակերպման ժամկետները և անցկացման աշխատակարգը՝ համաձայն հավելվածներ NN 1,2-ի:
2. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթություն» շաբաթաթերթի խմբագիր Գ. Մինասյանին՝ հաստատված աշխատակարգը և ժամանակացույցը տպագրել պաշտոնաթերթի առաջիկա համարում:
3. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը՝ հաստատված աշխատակարգը և ժամանակացույցը տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:
4. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանին:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X _____